№ 64 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 11 — 1891 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 11 № 64

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ինչ ծառայութիւն կարող է մատուցանել մամուլը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էջմիածնի ճեմարանի վարչութեան կողմից. Նամակ Բաթումից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աւազակների յարձակումն երկաթուղու գնացքի վրա. Պէչիկթաչի հրդեհը. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՆՉ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ԿԱՐՈՂ Է ՄԱՏՈՒՑԱՆԵԼ ՄԱՄՈՒԼԸ

Հանդուցեալ Մակար կաթողիկոսը քանի մի տարի առաջ դիմել էր կովկասեան բարձրը իշխանութեանը, խնդրելով որ արգելվի տեղական հայոց մամուլին քննադատել հայոց եկեղեցական դասի գործունէութիւնը, եկեղեցու պաշտօնեաների արած որ և է զեղծումները, վերջապէս արգելվի առհասարակ քննութեան տակ դցել եկեղեցական-վարչական այժմեան կազմակերպութիւնը՝ այդ կազմակերպութեան մէջ որ և է բուն վարչական, իրաւաբանական, կանոնական բարեփոխութիւն առաջարկելու մտքով: Հանդուցեալ Հայրապետի այդ տեսակ քայլը մենք սխալ ենք համարում:

Մամուլը օրքան աւելի կարողութիւն կունենայ քննադատել որ և է հաստատութեան հնացած և ժամանակի պահանջներին չը համապատասխանող կազմակերպութիւնը, հաստատութեան պաշտօնեաների արած զեղծումները,—այնքան էլ օգուտ կը բերէ նոյն հաստատութեան՝ ուղղելով նրա պակասութիւնները, պարզաբանելով բազմաթիւ հարցեր և անկեղծ կերպով առաջարկելով եկեղեցու օգտի համար ժամանակակից պահանջներին համեմատ բարեփոխութիւններ վերոյիշեալ հաստատութեան կազմակերպութեան վերաբերմամբ:

Քննադատելով հաստատութեան կազմակերպութիւնը, մամուլը նոյն իսկ իրան հաստատութեան անգնահատելի ծառայութիւն է մատուցանում: Ուրեմն ինքն եկեղեցին պէտք է հասկանար, որ ազգային մամուլը, քննադատելով եկեղեցու հնացած և անժամանակակից կազմակերպութիւնը, վերկացնելով հաստատութեան պաշտօնեաների արած զեղծումները՝ ոչ թէ թշնամական ոգով է թելադրվում յիշեալ հաստատութեան դէմ, այլ ղեկավարվում է միմիայն բարի ցանկութեամբ ապահովելու նոյն հաստատութեան պատեւաւոր և կանոնաւոր գոյութիւնը:

Եթէ մամուլին թոյլ տրվէր անկեղծ կերպով քննադատել եկեղեցու մէջ եղած կարգ ու կանոնները,—գուցէ կարելի կը լինէր առաջն առնել այնպիսի անախորժ դէպքերին, ինչպէս են մի որ և է Հաջիցաքորի, կամ Տեր-Պետրոսեանի արած զողութիւնները: Եթէ մամուլը իրաւունք ունենար քննադատել եկեղեցու պաշտօնեաների արած զեղծումները, նա կարող էր վերհափառի ուշադրութիւնը հրաւիրել այն տեսակ անպատեւաբեր երեւոյթների վրա, ինչպէս են, օրինակի համար, եպիսկոպոսների ձեռքով տգէտ, դռեհիկ մարդկանց՝ քահանայ ձեռնադրելը, և այլն:

Բացի սրանից, թէև գոյութիւն ունի ռուսաց օրէնսդրքի XI-որդ հատորի և նրա աւելուածի մէջ ամփոփված հայոց եկեղեցու կառավարչութեան վերաբերեալ կանոնադրութիւնը (Պոլօժէնիէ), բայց շատ անգամ նոյն իսկ եկեղեցականները անընդունակ են լինում ճշգրտութեամբ ըմբռնելու կանոնադրութեան այս կամ այն յօդուածի իմաստը և այդտեղ էլ մամուլը կարող է և նոյն իսկ պարտաւոր է ծառայութիւն մատուցանել եկեղեցականներին, պարզաբանելով նրանց թէ հին կանոնադրութեան և թէ օրէնսդրութեան նոր աւելուածների յօդուածների իմաստը:

Կը բերենք այստեղ մի քանի օրինակներ, որոնք ցոյց են տալիս թէ մեր եկեղեցականներից և նոյն իսկ մեր իրաւաբաններից ոմանք սխալ են ըմբռնում Պոլօժէնիէյի մի քանի կէտերը, կամ կատարելապէս անտեղեակ են յիշեալ կանոնադրութեան այս կամ այն յօդուածի գոյութեան մասին: Ոմանք կարծում են, օրինակ, որ կաթողիկոսական տեղակալը չունի նոյն իրաւունքները, որ ունի կաթողիկոսը, այն ինչ Պոլօժէնիէյի 945-որդ յօդուածը (Օրէնսդ. XI հատոր, մասն I, 1857 թ.) պարզ ցոյց է տալիս, որ տեղակալը կատարելապէս նոյն իրաւունքներն է վայելում, ինչ որ վայելում է կաթողիկոսը, բացի բուն կրօնական իրաւունքներից: Եւ դա շատ հասկանալի է. տեղակալը, որպէս եկեղեցական վարչական անձն, նոյնն է ինչ որ կաթողիկոսը, միայն ժամանակաւոր կաթողիկոս, ուրեմն վարչական տեսակէտից պէտք է վայելէ նոյն իրաւունքները. կարող է և արձակել ու նշանակել ճեմարանի ուսուցիչներին, կարող է դիմել կառավարութեանը՝ առաջարկելով սինոդի նոր անդամներ և այլն: Բայց ընտրված չը լինելով ժողովրդից և օծված չը լինելով կաթողիկոս, սա չէ վայելում բուն կրօնական իրաւունքները, ինչպէս եպիսկոպոսներ ձեռնադրելու իրաւունքը, միւռոն օրհնելը, որ և է փոփոխութիւն մտցնելը եկեղեցու բուն կրօնական մասում և այլն:

Ուրիշ օրինակ. ոմանք կարծում են, որ եկեղեցականը իրաւունք ունի կտակ գրելով իր սեփական դրամական միջոցները կտակել մասնաւոր անձանց: Սակայն այդպէս չէ: Օրէնսդրութեան XI հատորի 1 մասի, անցեալ 1890 թուի աւելուածի 1015 յօդուածում պարզ ասված է, որ թէ կաթողիկոսը, թէ եպիսկոպոսներն ու վարդապետները կարող են փող կտակել միմիայն աստուածահաճոյ հաստատութիւններին (և ոչ մասնաւոր անձանց), և եթէ այդ եկեղեցականները մեռնեն առանց կտակի, նրանց ամբողջ ունեցածը անպայման դառնում է Էջմիածնի վանքի սեփականութիւն:

Վերջացնելով մեր յօդուածը չենք կարող չը յիշել այստեղ, որ մամուլի քննադատութիւնը անտարակոյս օգուտ կը բերէր և մեծ ծառայութիւն կը մատուցանէր եկեղեցուն, եթէ կաթողիկոսական ընտրութեան հարցումն էլ աջակցէր հասարակաց կարծիքի անկեղծ արտայայտութեանը ընտրելիների անձնաւորութեան մասին և նրանց ապագայ գործունէութեան պրոգրամի մշակութեան վերաբերմամբ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷջՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Վերջին օրերս ազգային լրագիրները շատ յաճախ զանազան լուրեր են հաղորդում ընթերցող հասարակութեանը Մայր Աթոռիս ճեմարանի վերաբերմամբ: Տարաբաղդաբար այդ լուրերից մի քանիսը բոլորովին սխալ են և խեղաթիւրված, ուստի և պարտք եմ համարում հերքել դրանցից գլխաւորները և զգուշացնել բարեմիտ հայ հասարակութիւնը պղտոր աղբիւրներից բղխած այդ զրոյցներից:

Սրանից մի քանի ամիս առաջ ճեմարանի ալեկոծեալ վիճակն անյայտ չը մնաց հայ հասարակութիւնից, թէև այդ մասին գրեթէ ոչինչ չը գրվեց լրագիրներում: Այդ խառը միջոցին, երբ մի կողմից աշակերտներն ու բոլոր լսարանների ուսանողները բողոքում էին նախկին տեսչի դէմ, իսկ միւս կողմից՝ նախկին տեսուչն իր համախոհներով պահանջում էր անպայման վռնդել ճեմարանից առանց վկայագրերի բոլոր բողոքողներին, նորին վեհափառութիւն հանդուցեալ կաթողիկոսը, խաղաղութիւնը վերականգնեցնելու նպատակով, բարեհաճեց ինձ նուաստիս յանձնել ժամանակաւորապէս և բանաւոր հրամանով աղմկեալ ճեմարանի ղեկը:

Թէև անձնականապէս ինձ քնաւ հաճելի չէր միջամտել այդպիսի մի աղմկեալ գործի, սակայն մտածելով որ՝ ա) այդ խռովութիւնների պատասխանատուութիւնն երբէք չէ կարող ինձ վրա ծանրանալ, իբրև հեռու կանգնած մարդու վրա, այլ ամբողջովին ընկնում է ճեմարանի նախկին վարչութեան վրա, և բ) անհնարին էր ինձ անհնազանդ գտնվել վեհափառի բացարձակ հրամանին—ուստի և յանձն առայ:

Սրդէն յայտնի պէտք է լինի հայ հասարակութեանը, որ ոչ մի հնար չեղաւ հաշտեցնել վերոգրվված աշակերտներին և ուսանողներին նախկին տեսուչ բարեշնորհ Նահապետ աբեղայի հետ. ուստի և որոշվեց ըստ յատուկ հրամանի վեհափառ հայրապետի՝ տալ օրինական վկայագիր այն բոլոր ուսանողներին, որոնք այլ ևս չէին ցանկանում մնալ ճեմարանում և միւս կողմից խպառ հեռացնել Նահապետ աբեղային ճեմարանի տեսչութիւնից: Ահա այս ժամանակն էր, որ վեհափառ կաթողիկոսը բարեհաճեց առանձին կոնդակով, ընդ համարաւ 75, նշանակել ինձ ոչ թէ ժամանակաւոր, այլ լիաղօր տեսուչ և կառավարիչ, պատուիրելով միանգամայն առաջնորդվել ըստ ամենայնի 1886 թուին հաստատված կանոնադրութեամբ, և այնուհետև Նահապետ աբեղային ճանաչել իբրև լոկ ուսուցիչ մի քանի դասերի: Այս էլ էլ աւելորդ չենք համարում աւելացնել, որ բարեշնորհ Նահապետ աբեղային իսկոյն և եթէ ճեմարանից խպառ հեռացնելուն արդելք էր լինում մի դրամական հանգամանք, որով յիշեալ աբեղան կապված էր ճեմարանի՝ կամ լաւ ևս ասել, տեսչական ռոճկի հետ: Եւ յիրաւի, տեսչութիւնից արձակվելուց յետոյ էլ նա մինչև այսօր ամբողջութեամբ ըստանում է իր տեսչական ռոճիկը:

Այս կէտից պարզ երևում է, որ այդ ևս, Սարգիս եպիսկոպոսս, չեմ աղօթից առնը կամ հոգևոր ճեմարանը վաճառատուն չինողը, ինչպէս թոյլ է տուել իրան գրել մի հայ թերթ, սխալվելով անշուշտ ոչ թէ իրողութեան, այլ հասցէի մէջ:

Ճեմարանի արձակված ուսուցիչների տեղը մենք հրաւիրում ենք նորերը, այդ մասին տրված է արդէն պաշտօնական յայտարարութիւն «Արարատ» ամսագրում: Բայց մենք չը բաւականանալով այդ յայտարարութեամբ, դիմել ենք և մեր ծանօթ ու բարեկամ մարդկանց, որոնք ուսումնարանական գործերում մեզնից շատ են հասկանում, խորհուրդ հարցնելու, առանց ուշք դարձնելու թէ այդ մարդիկ զանազան կուսակցութիւնների են պատկանում, սակայն համոզված լինելով նրանց ազնուութեան վրա, որ խորհուրդ տալիս չեն առաջնորդվի նեղ կուսակցական հոգով: Մինթէ մեղք կամ յանցանք է խելացի բարեկամներից խորհուրդ հարցնելը: Բայց բանից դուրս է գալիս, որ նեղացել են նրանք, որոնցից խորհուրդ չենք հարցրել:

Ինչ վերաբերում է այն բանին, իբրև թէ մենք իբրև տեսուչ ճեմարանի գործում ենք հակառակ հանդուցեալ հայրապետի կարգադրութիւնների, այդ—թող ներվի մեզ ասել բուն խօսքը—ուղղակի զրպարտութիւն է: Մենք մեր ամբողջ կեանքում հանդուցեալ հայրապետի մօտ անձինքներից մէկը և մերձաւորը լինելու պատիւն ենք վայելած և կարծում ենք թէ հանդուցեալի մտադրութիւններն ու ապագայում անելիքներն անհամեմատ աւելի մեզ են յայտնի եղել, քան որ և է թերթի խմբագրի կամ թղթակցի, որ իր ծածուկ հաշիւները կարող է ունենալ և կամ գործիք դառնալ այս կամ այն կուսակցութեան ձեռքում: Իսկ մեր համոզմամբ՝ ճեմարանն ամեն կուսակցութիւններից պէտք է բարձր կանգնած լինի, և այդ քանին հասնելու համար, մենք չենք խնայելու ոչ մի ջանք և աշխատանք:

Հանդուցեալ հայրապետը, ինչպէս նաև Էջմիածնի ամբողջ միաբանական ուխտը վերջ ի վերջոյ եկել էին այն անդրդվելի համոզմանը, որ բաւ է այլ ևս ամբողջ մի հաստատութիւն զոհել այս կամ այն անձնական և ապացուցեալ անընդունակ անձնաւորութեան նեղ եսական շահերին:

Վերջացնելով մեր այս երկտողը, խնդրում ենք բոլոր հայ թերթերին նախապէս զգուշութեամբ ճշդել իրանց հաղորդված լուրերը ճեմարանի վերաբերութեամբ, իսկ գիտութեամբ խեղաթիւրած լուրերի համար յայտնում ենք ի գիտութիւն, որ այսուհետև այդպիսի հրատարակութիւնները կենթարկվեն խիստ օրինական պատասխանատուութեան: Բոլոր այն թերթերի վրա, որոնք լուրեր ուտպել կամ տպում են ճեմարանի վերաբերութեամբ, բարոյական պարտք ենք դնում արտատպել մեր այս գրութիւնն ամբողջութեամբ:

Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ և կառավարիչ՝ Սարգիս եպիսկոպոս

Էջմիածին, 5 յունիսի.

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Յունիսի 6-ին

«Հիւսիսային գործակալութեան» հեռագիրներից արդէն տեղեկացած կը լինէք այն արիւնահեղ անցքի մասին, որ տեղի ունեցաւ Բաթումի ծովափում, մաքսատան սահմանապահ զինուորների և մի խումբ փախստականների մէջ: Այդ մարդիկ, որոնց սահմանապահ զօրքը ընդունել էր մաքսանենդների տեղ, յայտնվում են այժմ, որ եղել են Կօբուլէթից փախչող մի քանի յայտնի աւազակներ, որոնք երկու ամիս առաջ մեծ անկարգութիւններ են արել այդ կողմերում և թաքնվել անտառներում: Կառավարութեան խիստ խուզարկութիւնից միանդամ ընդ միշտ ազատվելու համար, նրանք մտածել են ծովի վրայով անցնել սահմանը: Չը նայելով որ աւազակների ետևից ուղարկվեց «Кубанецъ» նաւը, նրանց այնու ամենայնիւ անկարելի է եղել ձերբակալել: Եթէ հաւատանք Տաճկաստանի կողմերից եկող նաւավարների ասածներին, այդ մարդիկ տաճկաց սահմանի վրա, Ռիզայում, ցանկացել են ափ իջնել: Պատահել են տաճկական սահմանապահների, որոնց հետ ևս ունենալով հրացանաձգութիւն, սպանել են մի քանիսին և անցել կրկին բաց ծովը:

Մի քանի օր առաջ, օրը ցերեկով, քաղաքի մէջ, մի յոյն մի ուրիշ յոյնին դանակով վիրաւորեց. բայց դրանով չը բաւականանալով, վայր դցեց նրան և մորթեց համարեա. թողնելով զոհին վայր ընկած, նա դիմեց ոստիկանատուն և յայտնեց իր արածի մասին: Դրանք ազգականներ են եղել և կռիւը կնոջ մասին էր:

Մի և նոյն օրերում մի թուրք սայլապան ծովափում ձիերը լողացնելիս խեղդվեց. պէտք է ի նկատի ունենալ, որ Բաթումի ծովափը շատ վտանգաւոր տեղեր ունի. բոլորովին ափի մօտ երբեմն պատահում են այնպիսի խորութիւններ, որ անփորձ մարդը մտնելիս կարող է խեղդվել: այդպիսի տեղեր աւելի շատ են փարոսի մօտերքում:

Բաղուից վերադառնալով, այստեղից անցան Մսերեանց օրիորդները: Բաթումի հասարակութիւնը, որը նրանց ճանապարհ էր դրել դէպի Թիֆլիս և Բաղու, նրանց օգտին հանդանակութիւն անելով, կրկին ստիպված եղաւ մի և նոյն ճանապարհով նրանց օգնելու և նրանց վերադարձի ժամանակ:

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 9 յունիսի

Կարդացի «Մշակի» № 62-ի մէջ տպագրված պ.պ. Ա. Սարդարեանցի և Բ. Առաքելեանցի նամակը, որով բացատրութիւն են տալիս թէ ինչու հանգուցեալ Ս. Պալասանեանի կենսագրութիւնը չեն հրատարակել և կամ ինչու երեք տարի փողերը իրանց մօտ են պահել և չեն յանձնել հանգուցեալի աշակերտին, որի օգտին պէտք է բրօշիւրը ծախվէր: Այդ պարոնները հաղորդում են, որ եղել են մարդիկ, որոնք խոստացել են հանգուցեալի կենսագրութիւնը իրանց յանձնել, բայց խոստումը չեն կատարել, յետոյ անկարող են եղել կրկին ժողով կազմել ու թէև իրանց բուռն ցանկութիւնն է եղել փողերը տալ հիւանդ աշակերտին, բայց իրաւունք չեն ունեցել, քանի որ ձայների բազմութեամբ բացէ ի բաց մերժվել էր ժողովում և բացատրում են, թէ ժողովում վճռվեց բրօշիւրը ձրի տարածել ժողովրդի մէջ և ոչ թէ յատկացնել հիւանդ աշակերտի օգտին, ինչպէս որ հաւատացնում է «Մշակի» լրատուն:

Լրատուն չէր կարող կարծել, թէ այդ պարոնները ընդունակ կը գտնվեն հրապարակապէս սուտ խօսել և իրանց ամբողջ բացատրութիւնը հիմնված է այդ ստախօսութեան վրա: Բոլոր պարոնները, որոնք մասնակցել են ժողովին, կարող են վկայել, որ ժողովը ձայների ռատմութեամբ վճռեց բրօշիւրը ծախել հիւանդ աշակերտի օգտին: Եւ որովհետև այդ պարոնները չը կարողացան բրօշիւրը հրատարակել, ամբողջ դումարը թշուառ աշակերտին պիտի յանձնէին և ոչ թէ երեք տարի պահէին իրանց մօտ:

Ցոյց տալու համար թէ այդ պարոններն ինչպէս իրանց գլուխը կորցրել են, մի բօպէ ենթադրենք թէ դրանք ճշմարիտ են ասում, որ չը նայելով իրանց բուռն ցանկութեան փողերը տալ հիւանդ աշակերտին, իրաւունք չեն ունեցել, քանի որ ձայների բազմութեամբ բացէ ի բաց մերժվել էր ժողովում և այնուհետև իրանք անելք դրութեան մէջ են ընկել և չեն իմացել փողերն ինչ անել: Բայց ինչու այդ պարոնները, որոնց բուռն ցանկութիւնն է եղել օգնել թշուառ աշակերտին, այսօր լրատուին առաջարկած միջոցը չեն գործադրել, որ կարողանային ազատվել այդ դրութիւնից: Այսօր լրատուին առաջարկում են այդ պարոնները, որ եթէ իրաք կայ նրա մէջ ողորմութեան զգացմունք, վաղը և եթ թող բարեհաճէ վերցնել իրանցից ստորագրվողների ցուցակը և մեծամասնութեան հաւանութիւնը ստանալ՝ թէ նրանք համաձայն են փոխանակ բրօշիւրի վրա ծախսեր անելու, մնացորդը յատկացնել թշուառ աշակերտին և իրանք իսկոյն կը յանձնեն պարոնին այդ փողերը և ներողամտութեամբ աւելացնում են, որ իրանք փող ժողովեցին երկու օրում, իսկ պարոնին տալիս են մի շաբաթ ժամանակ կարծիքներ ժողովելու, քանի որ առաջինն աւելի դժուար է քան երկրորդը: Կրկնում ենք թէ ինչու այդ պարոններն երեք տարվայ ընթացքում գտնէ մի անգամ չը փորձեցին գործ դնել այդ միջոցը, որ փողերն երեք տարի իրանց մօտ չը մնային: Մանաւանդ որ, ինչպէս իրանք յայտնում են, դժուարը, այն է՝ փող ժողովելը, իրանք երկու օրումն են կարողացել, իսկ կարծիքներ ժողովելը մի օրում կը կարողանային:

Որովհետև լրագիրների սպառնալիքներից ստիպված վերջապէս վճռել են այդ պարոնները գործադրել փողերը նպատակին, ես՝ դրանց պատճառաբանութիւնների մասին այսքան էլ խօսելս բաւական եմ համարում, չը նայելով որ այդ պարոնների թքով կպած բացատրութիւնների մասին կարելի էր էլի խօսել երկար:

Ս. Խարազեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարում տպագրում ենք Էջմիածնի ճեմարանի տեսուչ Սարգիս եպիսկոպոսի մեզ ուղղած պաշտօնական գրութիւնը, որպէս հերքում ճեմարանի գործերի վերաբերմամբ հայոց մամուլի մէջ տարածված սուտ լուրերի:

—

Տպելով ներկայ համարում «ինչ ծառայութիւն կարող է մատուցանել մամուլը» վերնագրով առաջնորդող յօդուածը, կուզենայինք այստեղ աւելացնել հետևեալ լրացուցիչ տեղեկութիւնը: Բացի մեր բերած յօդուածները Պոլսոյ Էնիէից, կը յիշեցնենք ընթերցողներին նոյն օրինագրքի և 919-որդ յօդուածը (XI т, 1 ч, 1857), որտեղ ասված է, որ բացի աշխարհական պատգամաւորներից, մասնակցում են կաթողիկոսի ընտրութեանը սինոդի բոլոր անդամները և վանքում ներկայ գտնված եօթ հոգի աւագ եպիսկոպոսներից: Իսկ եթէ այդքան թիւ եպիսկոպոսներ չը կայ, նրանց թիւը պէտք է լրացվի վարդապետներով:

—

Ինչպէս յայտնի է ընթերցողներին, Հայոց գրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութեան մայիսի 4-ի ընդհանուր ժողովը յանձնարարել էր ժողովի նախագահին դիմել Թիֆլիսի պ. նահանգապետին ընկերութեան մէջ ծագած երկպառակութիւնները վճռելու համար: Այժմ իմանում ենք, որ պ. նահանգապետը վճռել է հարցը յօգուտ ընդհանուր ժողովի, մի և նոյն ժամանակ պատուիրելով ընդհանուր ժողովին հսկել, որ ընկերութեան կանոնագրութիւնը ճշգութեամբ կատարվի:

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ տիրող անտանելի չոքերի պատճառով շատերը մեր քաղաքի բնակիչներից ուղևորվում են արդէն դէպի ամարանոցները: Թիֆլիսի փողոցներում թողն աներևակայելի է. քաղաքային ջրանցքը բաւականաչափ ջուր չունի, որպէս զի կարելի լինէր ջրել քաղաքիս թողոտ փողոցները:

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Տեղիս հայոց երկսեռ դպրոցների հարցաքննութիւնները վերջացան յունիսի 3-ին: Հարցաքննութիւններին ենթարկվեցան այն աշակերտներն ու աշակերտուհիները, որոնք պիտի աւարտէին իրանց ուսումը, իսկ միւս դասարաններում եղան միայն դասարանական քննութիւններ: Յունիսի 2-ին հարցաքննութիւններ եղան ծնողների ներկայութեամբ: Բազմութիւնը լցրել էր դպրոցը, այնպէս որ նստելու տեղ չը կար և շատերը ոտքի վրա կանգնած մնացին: Ունկնդիրները, առհասարակ, գոհ մնացին քննութիւններից»:

—

Մեզ գրում են Կաղզուանից, որ անցեալ մայիս ամսի 24-ին այդտեղի զինուորների ամառնային բանակում, որը գտնվում է մօտակայ սարի լանջի վրա, անձրևի և ամպի գոռոցի ժամանակ մի զինուոր կայծակահար եղաւ: Ասում են, որ անցեալ տարիներում, մօտաւորապէս նոյն տեղում, կայծակը խփել էր տեղացիներից մի երկուսին:

—

ԱՂԴԱՇԻՑ մեզ գրում են հետևեալը. «Մեր այս տարվայ փորձը ցոյց տուեց, որ մենք հարկաւորութիւն չունենք արտասահմանից բօժօժի սերմը բերել տալ, քանի որ մեր երիտասարդ մասնագէտ պ. Մուսինեան այդ սերմը կարողանում է պատրաստել մեզ մօտ, Կովկասում: Երևում է, որ յիշեալ պարոնը, որն իր ուսումը Ֆրանսիայումն է ստացել, ոմանց պէս ապարդիւն չէ անցկացրել իր ուսանողական շրջանը և բաւականաչափ գիտութիւն է ձեռք բերել: Շնորհակալութիւն յայտնելով պ. Մուսինեանին, նրա օգտաւէտ գործունէութեան համար, սելիւլէր սերմը պատրաստելու դժուարագոյն գործում, աջողութիւն ենք ցանկանում նրան և ապագայում»:

—

Նոր նշանակված Թիֆլիսի փոխնահանգապետ պ. Ալիմովին յունիսի 7-ին ներկայացաւ՝ Թիֆլիսի ոստիկանապետը՝ իրան ստորադրեալ ոստիկանական պաշտօնեաների հետ միասին:

—

«Տարազ» շաբաթաթերթը հաղորդում է, որ լոյս տեսաւ բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեան (Թիֆլիսեցու) «Հանրամատչելի Բժշկարանի» առաջին հատորի առաջին տետրակը, 107 մեծադիր երեսներից բաղկացած: Ամբողջ աշխատութիւնը բաղկացած կը լինի 800 երեսներից: Բաժանորդագինը 3 ռուբլի է: Այս առաջին տետրակի գինը 70 կոպէկ է:

—

Մի և նոյն շաբաթաթերթում կարդում ենք, որ Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը իր վերջին նիստում որոշել է Էջմիածնի ճեմարանից արձակված ուսուցիչներից մինին հրաւիրել Ներսիսեան դպրոցը, իսկ երկու ուսուցիչներին տեղական խմբից՝ արձակել դպրոցից:

—

Յունիսի 1-ին, Կովկասեան բժշկական ընկերութեան նիստում, բժշկապետ Գաուդէլին, որը նորերս վերադարձել է Բերլինից, մի զեկուցում կարդաց Կոխի մեթոդով բժշկութեան մասին Գերմանիայում: «Կոխի լիմֆայով ոգևորվելու շրջանն այժմ Գերմանիայումն ևս անցել է: Իրաւ է, Կոխի մեթոդով հիւանդներին բժշկելու համար գեղեցիկ շինված հիւանդանոցներում հիւանդները լաւ և մննդաղար կերակուրներ ուտելով, քաշի մէջ աւելանում են և լաւանում են, բայց այդ լաւանալը կարելի է և ուրիշ միջոցներով: Բայց Կոխի մեթոդով բժշկութեան ժամանակ եղած անսպասելի մահուան դէպքերը պարզ ցոյց տուեցին, որ այդ միջոցը վստահելի չէ և կեանքի համար վտանգաւոր է, և Գերմանիայի բժիշկները նոյնպէս գնալով հիասթափվում են այդ դեղից: Ինքն Կոխը, որը դիտնականի համար օտարոտի ինքնավստահութեամբ այս տարվայ սկզբին յայտարարում էր, թէ իր գտած լիմֆան ամենաղօր դեղ է, նա էլ հիասթափվել է: Թէ որքան Կոխ հիասթափվել է, երևում է նրանից, որ նա այժմ իր հաչակաւոր հեղուկը, որը Թիֆլիս էլ բերվեց, հրամայեց այլ ևս չը գործածել, և բոլոր պահեստներից արդէն յետ են առնում այդ հեղուկը: Ցայսմիկ չէ թէ ինչ անյայտ պատճառներով վերջերս Կոխ թողեց համալսարանը, որտեղ նա պրօֆէսօր էր համարվում, թէպէտ և դասախօսութիւններ չէր կարդում այնտեղ:»

—

Կիրակի օր, յունիսի 9-ին, Թիֆլիսի Վանքի մայր-եկեղեցում, ս. պատարագն աւարտվելուց յետոյ, առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցաւ նոյն եկեղեցու երեցփոխի ընտրութիւնը: Նորից երեցփոխ ընտրվեց պ. Իսահակ Բուդաղեանց, առանց քուէարկութեան: Իսկ հաշուատեսներ ընտրվեցան՝ բժշկապետ Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի), Գէորգ Զմշկեանց, և Միքայէլ Սալամբէկեանց. վերջինս հրաժարվեց այդ պաշտօնից:

—

Մինչև այժմ Թիֆլիսի մասնաւոր բանկերում մուրհակներ ազատելու համար փող ընդունում էին մինչև կէսօրվայ ժամը 2-ը, իսկ այժմ պէտք է ընդունվեն մինչև ժամը $12^1/_2$:

—

ԹԻՖԼԻՍԻ հայոց գրքերի հրատարակութեան ընկերութեան ընդհանուր ժողովի նախագահը յայտնում է, որ հինգշաբթի, յունիսի 13-ին, երեկոյեան ժամի $7^1/_2$-ին կը կայանայ Դումայի դահլիճում ապրիլի 13-ի և մայիսի 4-ի ընդհանուր ժողովի շարունակութիւնը: Նիստի պարապմունքները լինելու են. 1) անցեալ ժողովի արձանագրութեան ընթերցումը, 2) Թիֆլիսի պ. նահանգապետի առաջարկութեան ընթերցումը, 3) 1890 թի հաշուի ընթերցումն ու վաւերացումը, 4) 1891 թի նախահաշուի ընթերցումն ու վաւերացումը և 5) լրացուցիչ ընտրութիւններ:

—

Կիրակի, յունիսի 9-ին, առաւօտեան ժամը 11-ին, ԹԻՖԼԻՍԻ Վանքի մայր-եկեղեցում հոգեհանդիսա կատարվեց Պետրոս Ադամեանի յիշատակին: Մեծ բազմութիւն էր հաւաքվել թէ եկեղեցում և թէ եկեղեցու դաւթում: Հասարակութեան մէջ մենք նկատեցինք և օտարազգիներին, որոնք անտարակոյս պատկանում են հանգուցեալի տաղանդը յարգողների թվին:

—

Մեր երիտասարդ նկարիչ պ. Տէր-Աստուածատուրեան խնդրում է մեզ յայտնել, որ իր ալբօմը լոյս կը տեսնի սեպտեմբեր ամսին: Հրատարակութիւնը լոյս տեսնելուց յետոյ, կարժենայ 4 կամ 5 ռուբլի: Իսկ բաժանորդագրութեան ժամանակ արժէ 3 ռուբլի:

—

Մեզ ուղարկված են երկու գրքոյկ՝ 1) «Սպանված հայրը», աշխատութիւն Լէօի, արտատպած «Ազբուրից» և 2) «Կարնոյ գաղթը» (աւելի լաւ է ասել Կարինի), որ կազմել է Գիւտ քահանայ Աղանեան, արտատպած «Արձագանքից»: Առաջին գրքոյկը արժէ 5 կոպէկ, երկրորդը՝ 10 կոպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԻԱԶԱԿՆԵՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳԸՆԱՑՔԻ ՎՐԱ

—

Կիրակի իրիկուն Կ. Պոլսէն մեկնող եւրոպական կառախումբը յանդուգն յարձակման մը առարկայ եղաւ Սինէքլիի և Զէրքէզքէօի միջև, 116 քիլօմէթրի վրա: Երեսուն աւազակաց խումբ մը, Աթանաս անուն մարդու մը հրամանաց ներքև, բռնելէ յետոյ երկաթուղւոյ պահապանն և այն ամէն անձինք, որք կրնային ազմուկ յարուցանել, գծին երկաթները վերցուց և դարանի կեցաւ: Գիշերը մութ ըլլալով, մեքենավարը չը կրցաւ ժամանակին նշմարել գծին վիճակը, և 116-րդ քիլօմէթրին վրայ կառախումբը գծէն դուրս ելաւ: Մեքենայի, ածուխի, զոյքերու կառքերն ինչպէս նաև Գ. և Բ. կարգի վագոններ շրջեցան: Բարեբաղդաբար ոչ ոք վիրաւորուեցաւ:

Կառախումբը գծէն ելլելուն պէս, դարանամուտ աւազակներն երեսն ելլելով, վրան յարձակեցան: Աւազակապետն՝ Աթանաս՝ յունարէն լեզուաւ քանի մը խօսք ուղղեց կառախմբի պետին, զոր միւս բոլոր պաշտօնէից հետ ձերբակալել տուաւ, որպէս զի արգիլուին իմաց տալէ: Յետոյ պահակներ կեցուց կառախումբին շուրջն, այնպէս որ ոչ ոք կարենար դուրս ելլել: Այն ատեն, ընկերակցութեամբ կառախմբի պետին և քանի մը աւազակաց, յաջորդաբար բանալ տուաւ բոլոր վագոններն, անոնց մէջ գտնուածներն առաւ և ուղևորները կողոպտեց, ոմանց գրպանի մանր դրամը միայն թողլով: Այս գործողութիւն կատարուեցաւ ամենայն պաղարիւնութեամբ և առանց որ և է բռնութեան:

Առաջին կարգի կառքի մը մէջ գտան գերմանացի ուղևոր մը, որ հնութիւններ պարունակող փոքրիկ պարկ մը ունէր իւր քով. այդ պարկն առին: Ուրիշ ուղևորի մ'ալ դրամ պարունակող քսակն առին: Վագոններուն և ուղևորաց գրպաններուն մէջ աւազակաց կատարած խուզարկութիւնք, որք սկսած էին գիշերուան ժամ $2^1/_2$-ին աւարտեցան ժամ 7-ին: Այս չորս ու կէս ժամու գործողութենէն յետոյ աւազակապետը կառքերէն դուրս հանել տուաւ այն ուղևորներն, որք վար պիտի դրուէին իրր պատանդ: Այս վերջիններէն միոյն քով գտնուող կին մը—հաւանաբար ամուսինը—սկսաւ արտասուել յուսահատաբար: Զարագործք չը թողուցին իրենց գերին, բայց հէգ կինը մնիթարեցին, ֆրանսերէն լեզուաւ ըսելով անոր—«Մի լաք, տիկին, ամուսինդ ձեր քով պիտի դառնայ նորէն»:

Երբ աւազակները կը պատրաստուէին հեռանալ, հետերնին տանելով իրենց գերիներ, Աթանաս հետևեալ խօսակցութիւնն ունեցաւ կառախումբի պետին հետ.

—Ի՞նչ ազգէ էք:

—Գերմանացի:

—Թուրքերէն կը խօսի՞ք:

—Այո:

—Ուրեմն մեզ հետ պիտի գաք, որպէս զի թարգմանի պաշտօն վարէք:

Աւազակները Վիզէի կողմ քաշուեցան, հետերնին տանելով կառախումբին մեքենավարը, և առաջին կարգը նստող հինգ ուղևորներ՝ որոց չորսը գերմանացի և անգլիացի մը՝ խոհարար մայրաքաղաքիս անգլիական դեսպանատան:

Քիչ վերջը, աւազակները թողուցին իրենց գերիներէ մին՝ Պ. Մաուրիկ Իզրայէլն, հրամայելով նմա, որ Կ. Պոլիս գայ և փրկանքի համար որոշեալ դումարը ճարէ: Աթանաս յայտնեց թէ այդ դումարն է 200,000 ֆրանք, որ պիտի վճարուի Քըրք-Քիլիսէ, և սպառնացաւ սպաննել իր գերիները, եթէ ոստիկանութիւնը ամենաիզուր ձեռնարկ մը ընէ զանոնք ազատելու համար:

Աւազակապետին այս յայտարարութեան վրայ Պ. Մաուրիկ Իզրայէլ և անգլ. դեսպանատան խոհարարը, որք ազատ թողուած էին, մեկնեցան երկուշաբթի, կէսօրին մայրաքաղաքս հասան:

Կողոպտեալ կառախումբին առաջին և երկրորդ կարգի վագոններուն մէջ գտնուող ուղևորաց թիւն էր 25, որոց չորսը կին էին:

Աւազակապետ Աթանաս կարճահասակ մարդ մը է եղեր, կեղծ սև մօրուք մը դրած, որ բոլորովին չէր ծածկեր իր խարտեաշ մօրուքը: Մարքուր հագուած է և մասնաւորապէս դիտուած է իր շապիկն որ նոր ձեւով պատրաստուած ու ընտիր ճերմակեղէն մ'էր: Իր ընկերներն ամենքն ալ երեսնին սեցուցած էին:

Մաուրիկ Իզրայէլ և ուրիշ անձ մը երկուշաբթի իրիկուն մեկնեցան մայրաքաղաքէս, հետերնին տանելով 200,000 ֆրանքի դումարն, օսմանեան ոսկի դրամով, զոր աւազակաց նշանակած տեղը պիտի տանին յանձնեն:

(Արևելք)

ՊԷՇԻԿԹԱՇԻ ՀՐԴԵՀԸ

—

Կ. Պոլսի Պէշիկթաշ մասում պատահած հրդեհի մասին այնտեղի լրագիրները գրում են. «Պատրիարք Հայրն թէև երէկ հրաւիրուած էր ի կայսպալատ ներկայ գտնուելու այն հացկերոյթին, որ զանազան ազգաց հոգևոր պետերուն ի պատիւ տրուեցաւ՝ կայսերազուն իշխանաց Թլփատութեան հանդիսին առթիւ, սակայն չը կրցաւ երթալ, որովհետև Ն. Ամենապատուութիւն Պէշիքթաշի հրդեհն լմանալով ուղղակի այդ գիւղի եկեղեցին գնաց և հարկ եղած անմիջական միջոցները ձեռք առնել տուաւ աղատելու համար եկեղեցին ու վարժարանը։ Ս. Պատրիարք Հօր հետ կը գտնուէին նաև Պատրիարքական փոխանորդ Հայրը, Քաղաքական Ժողովոյ ատենապետ Աղն. Սահակ էֆէնտի Ղազարոսեան, Աբիկ էֆէնտի Ունճեան, Ցետեսական խորհրդոյ ատենապետ Միհրան էֆէնտի Սեթեան և ժողովականք, որք աջակցութեամբ Պէշիկթաշի Թաղական խորհրդոյ Մեծ. անդամոց և Թաղին ազգայնոց, որ և է ջանք չը խնայեցին եկեղեցին ու վարժարանը մոխիր դառնալու վտանգէն աղատելու համար։ Եկեղեցւոյն տանիքին վերի մասը միայն այրած է, որովհետև այդ տանիքին տակը քարուկիր կամար է. չէնքին պատերը բաւական վնասուած են։ Եկեղեցւոյ զանգակատունը, ինչպէս նաև Թաղական խորհրդարանն և գիւղին քարոզիչ Գեր. խորէն արքեպիսկոպոս Նար-Պէյի բնակութեան յատուկ չէնքն այրեցան։

«Այս չէնք, որ կառուցուած էր եկեղեցւոյ շրջափակին մէջ, կը բաղկանար երեք յարկերէ, որոնց ստորինն սպասաւորաց յատուկ, միջին յարկն ընդունելութեան դահլիճ ու աշխատութեան դրասենեակ, լաւ կահաւորեալ, և վերի յարկը ննջարան։ Գեր. Նար-Պէյ Սրբազանի զոյքերը, կարասին ու մատենադարանն, որք կը գտնուէին այդ չէնքի մէջ, գրեթէ ամբողջովին այրած են։

«Մաքրուհեան վարժարանին պատուհանները միայն այրած են, որովհետև չէնքը քարուկիր է։ Թէ եկեղեցւոյն և թէ վարժարանին կրած վնասը չորս-հինգ հարիւր ոսկի կը հաշուի։

«Ցետեսական խորհուրդը Ղալաթիոյ մէջ ի նիստ գումարուած պահուն Պէշիքթաշի հրդեհն իմանալով հրահանգ տուաւ Ելմական Ցեսչութեան որ հարկ եղածն ի գործ դնէ եկեղեցին ու վարժարանը վտանգէ ազատելու համար։ Խորհուրդը նախ իր քարտուղարը ղրկեց հրդեհի վայրն և յետոյ ժողովականք անձամբ գնացին»։

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՅԻՑ

—

Ցիւրիխ, 1 յունիսի

Ուսումնական տարին մօտենում է իր վախճանին։ Բազմաթիւ հայ երիտասարդներ, աւարտելով իրանց ուսումը միջնակարգ դպրոցներում, պիտի գնան զանազան տեղեր—բարձրագոյն կրթութիւն ստանալու նպատակով։ Այդ աւարտողների մի որոշ պրօցենտն էլ սահմանը կանցնի, մտադիր լինելով արտասահմանի բարձրագոյն դպրոցներում իր կրթութեան գործը շարունակել։ Ահա հէնց այդ վերջինները անծանօթ լինելով ընդհանրապէս արտասահմանի հետ և մասնաւորապէս այստեղի կեանքի, բարձրագոյն դպրոցներ մտնելու և այլ պայմանների հետ, շատ անգամ մեծ դժուարութեան մէջ են լինում, և ամենաչնչին տեղեկութիւններն անգամ լսում են և կարդում մեծ ագահութեամբ։ Այդ փոքրով իմանալով, մենք կամենում ենք մի քանի տեղեկութիւններ տալ զէպի արտասահմանի գիտութեան աղբիւրները վազող հայ երիտասարդներին։ Մեր տեղեկութիւնները շատ էլ մանրամասն չեն լինելու, սակայն բոլոր գլխաւոր կէտերը մենք պիտի շօշափենք։

Ամենից առաջ կանգնած է նիւթական հարցը—այսինքն թէ ինչքան պիտի ունենալ արտասահման գալու համար։

Ուսման ծախս. շաբաթը մի ժամ լսելով Ցիւրիխի համալսարանում, վճարում են սեմեստրում (մի կիսամեակ) 5 ֆրանկ, հետևաբար տարին, որը երկու սեմեստրից է բաղկացած—10 ֆրանկ։ Լսած ժամերի թիւը լինում է սովորաբար 30—35, (այն դէպքում երբ ուսանողը այնպիսի գիտութիւն է ուսումնասիրում, որ գործնական պարապմունքների կարիք չունի)։ Երբեմն պատահում է, որ կարդացվող դասախօսութիւնների մէջ մի քանիսը ձրի են լինում, որովհետև շատ անգամ իրանք պրոֆէսորները, թէ ուսանողներին մի քիչ թեթևութիւն տալու համար (աւելի մեծ քանակութեամբ առարկաներ լսելու միջոց տալու նպատակով), կամ թէ երբ կարդացվող առարկան նոր է և այլն... ձրի են կարդում։ Այդ տեսակ ժամերի թիւը 5 համարելով, վճարը հասնում է սեմեստրում 125—150 ֆրանկի, հետևաբար տարին 250—300 ֆրանկ։ Իսկ այն դէպքում, երբ ուսանողը գործնական պարապմունքներ էլ է վերցնում, այդ թիւը պէտք է կրկնապատկել, որովհետև զանազան կլինիկաները, լաբօրատորիաները և այլն... բաւական շատ փող են նստում։ Բացի այդ բոլորից պէտք է հաշուել և զանազան դասագրքերի և դպրոցական այլ և այլ առարկաների ծախսը։

Չը կամենալով երկարացնել, մի մի հաշուելով թէ ինչքան է հարկաւոր ուտելու, խմելու, հագնելու, սենեակի և այլ այդ տեսակ բաների համար, մենք կը նկատենք, որ 50 ռուբլով կարելի է մի կերպով ապրել, իսկ եթէ մի քիչ աւելի ունենալ, աւելի լաւ։ 50-ից պակասով ապրել սաստիկ դժուար կը լինի և միանգամայն անկարելի։ Բայանի բան է, եթէ ռուսաց փողի կուրսը իր իսկական բարձրութեան վրա լինէր, այն ժամանակ 40-ով կարելի կը լինէր աւելի լաւ ապրել, քան այժմ 50-ով, որովհետև սկզբունքով 100 ռուբլին արժէ 400 ֆրանք, բայց այժմ տալիս են միայն մօտաւորապէս 299 ֆրանկ, հետևաբար 40 ռուբլով կարելի կը լինէր 160 ֆրանկ ստանալ, մինչդեռ այժմ 50 ռուբլով ամենաշատը 145 են տալիս։

Մեր ծնողները կարծում են, որ որքան քիչ ստանան իրանց որդիք, այնքան լաւ կը լինի նրանց համար, կամ ինչպէս իրանք են ասում «չեն փչանայ»։ Բայց «փչանալու» ընդունակ անձնաւորութիւնը կարող է «փչանալ» և քիչ ստանալով։

Նիւթական սուղ միջոցներ ունենալով, ամբողջ ուսանողական կեանքը մեծ դժուարութիւնների մէջ անցնելով, ուսանողը մտաւորապէս, բարոյապէս և ֆիզիկապէս յոգնում է, նա դառնում է մի տեսակ տխրահայեաց պեսիմիստ և կեանքի մէջ մտնելով, ծանրանում է նա հասարակութեան մէջքին, որպէս մի յոգնած, դաղրած, կամ ինչպէս ասում են «չը ծաղկած, բայց թառամած» անդամ։ Գուցէ այդ է պատճառը, որ մեր բարձրագոյն կրթութիւն ստացած երիտասարդներից շատերը, հասարակական բոլոր գործերից հեռացած, ամբողջապէս իրանց նեղ անձնական շրջանումն են պտտվում, միակ նպատակ ունենալով, որքան կարելի է փող աշխատել, լաւ կին, երեխաներ, «կեանք» և այլն... ունենալ,—մի խօսքով ապրել իրանց անձի համար։

Գերմանիայում և Շվեյցարիայում ռուսական միջնակարգ դպրոցներից չափահասութեան վկայական ունեցողները ընդունվում են համալսարանների բոլոր բաժինները առանց քննութեան և հեշտ։ Մի և նոյնը կարելի է ասել և Գէորգեան ճեմարանը ու Ներսիսեան դպրոցը աւարտածների մասին։ Բացառութիւն են կազմում մի քանի տեղերում պօլիտեխնիկան, այգեգործական և այլ հմանման բարձրագոյն դպրոցները, որոնցում երբեմն մի թեթև քննութիւն են պահանջում։

Կովկասի միջնակարգ դպրոցներում շատ չնչին ուշադրութիւն են դարձնում նոր լեզուների ուսանելու վրա, և այդ պատճառով աւարտողների ամենաւատ ուսումնասիրած առարկաները լինում են սովորաբար նորագոյն—ֆրանսական և գերմանական լեզուները։ Այն պարոններին, որոնք մտադիր են իրանց ուսումը արտասահմանում շարունակել, խորհուրդ կը տայինք այդ լեզուների վրա մի առանձին ուշադրութիւն դարձնել, որովհետև լիզուն սովորելը այնքան էլ հեշտ չէ աջողվում։

Ուսումնական տարին սկսվում է մօտաւորապէս հոկտեմբերի 8/20-ին։ Միջնակարգ դպրոցը աւարտելով մօտաւորապէս յունիսի 15/27-ին, լաւ կանէին արտասահման եկող պարոնները, եթէ առանց ժամանակ կորցնելու ճանապարհվէին, որպէս զի մինչև ուսման սկիզբը մնացող 3 ամսում կարելի լինէր լեզուն մի քիչ սովորել։

Մեր տուած մի քանի տեղեկութիւնները վերաբերում են գրեթէ այն բոլոր գլխաւոր կէտերին, որոնք կարող էին հետաքրքրել հայ ուսանողին, բացի դրանից նրանք, այդպէս ասած, ընդհանուր են, այսինքն, ոչ թէ միայն Ցիւրիխին և Ցիւրիխի համալսարանին են վերաբերում, այլ Շվեյցարիայի և Գերմանիայի գրեթէ բոլոր համալսարանական քաղաքներին և համալսարաններին։

Արտանց ուրախ կը լինէինք, եթէ մեր յայտնած մի քանի տեղեկութիւնները գոնէ մի չնչին օգուտ բերէին հայ նորաւարտներին։

Գ. Գ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Իտալական արմատականները կազմակերպում են ժողովներ, երեքպետեան դաշնակցութեան դէմ բողոքելու համար։

—Բոլգարական կառավարութիւնը դիտաւորութիւն ունի մի նոր փոխառութիւն անել։

—Կ. Պոլսի շրջականների յոյն աւազակները իրանց պարագլուխ Անթանաս աւազակապետի բերանով յայտնել են, որ եթէ թուրքաց կառավարութիւնը կուզենայ իրանց խումբը հալածել, այն ժամանակ նրանք աւելի էլ սարսափելի յարձակում կը գործեն երկաթուղու գնացքի վրա։

—Բերլինից հեռագրում են, որ մի հրապարակական ժողովում, Վիրխով պրոֆէսորի նախագահութեամբ, վճռված է եղել բողոքել հացահատիկների մաքսահարկի դէմ։ Ժողովի որոշման մէջ ասված է, որ եթէ մաքսահարկերը կը պահպանվեն՝ անպատճառ սով կը յայտնվի Գերմանիայում։

—Նովո-Բազարում կրկին անկարգութիւններ են տեղի ունենում։

—Ֆրանսական «Figaro» լրագիրը հաղորդում է, որ Ջերնօգորիայի իշխանի աղջիկներից մին, իշխանուհի Կսենիա, նշանված է Սերբիայի մանուկ թագաւոր Ալէքսանդրի հետ։ Նշանադրութիւնը. պաշտօնապէս կը յայտնվի, երբ թագաւորը 16 տարեկան կը լինի, իսկ իշխանուհին 14 տարեկան։

—Մայիսի 26-ին (յունիսի 2-ին) ամբողջ Իտալիայում տօնվեց Գարիբալդիի մահուան տարեդարձը։ Մի քանի քաղաքներում աղմուկներ եղան, ամբոխի միջից լսվեցան սպառնալի ձայներ Աւստրիայի դէմ և «կորչի երեքպետեան դաշնակցութիւնը» աղաղակներ։ Բայց ամենից չքեղ կերպով տօնվեց Իտալիայի ազատութեան հերոսի մահուան տարեդարձը Ցուրինօ քաղաքում։ Այդ քաղաքի թատրոնում հանդիսաւոր կերպով տօնվեց Գարիբալդիի յիշատակը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շները մեծ դեր էին խաղում և մեծ նշանակութիւն ունէին հին ասորեցիների և քաղդեացիների կեանքում։ Շունը ուղեկցում էր մարդուն պատերազմի, որսորդութեան և բազմաթիւ կրօնական ծէսեր կատարելու ժամանակ։ Կաւէ աղիւսները պահպանել են շան պատկերը և այս պատկերի վրա տեսնում ենք և նրա անունը։ Զարմանալի չէ, ուրեմն, որ շունը յաճախ հանդիպում է ասորեցիների սրբազան նշանների մէջ՝ օձի, կարիճի և այլ կենդանիների կողքին։ Քուրմերը գուշակութիւններ էին անում շան այս կամ այն գործողութեան վրա. օրինակ՝ եթէ կարմիր շունը մտնում էր պալատը,—այդ նշանակում էր, որ վերջինս կը քանդվի թշնամու ձեռքով. եթէ սպիտակ շունը մտնում էր տաճարը,—այդ նշանակում էր, որ տաճարի հիմքը հաստատ է. իսկ եթէ սև շուն էր մտնում տաճարը,—այդ նշանակում էր, որ տաճարի հիմքը հաստատ չէ։

*
**

Գերմանական Շտուտգարտ քաղաքում հրատարակվող «Das Ausland» գրական շաբաթաթերթի ներկայ 1891 թուի երեք տետրակներում (№№ 20, 21 և 22) տպվեցան մի շարք հետաքրքիր ազգագրական յօդուածներ հայերի մասին։ Այդ յօդուածները կրում են «Die Armenier und ihre Nachbarvölker in der Türkei» (Հայերը և նրանց հարևան ազգերը Թուրքիայում) վերնագիրը։ Յօդուածների հեղինակը մի հայ երիտասարդ է, դոկտոր Ց. Բարխուդարեան։

*
**

Յունիսի 7-ին Իտալիայում՝ Վենեցիայում և Միլանում մեծ երկրաշարժ կար. առաւօտեան 2 ժամ 8 րօպէին Վերօնում երեք զօրեղ ստորերկրեայ հարուածներ լսվեցան, որոնք սարսափ դցեցին հասարակութեան վրա, այնպէս որ մի դպրոցի տեսչուհի երկիւղից մեռաւ, Մարջէնիցօում երեք տներ քանդվեցան և մի քանի մարդիկ էլ սպանվեցան, Տրէպանօում բազմաթիւ տներ վնասվեցան, Բաղնէ Կալիվէնայում 17 հոգի հանեցին քանդված տների աւերակներից։ Ա. առաւօտեան 7 ժամին նոր երկրաշարժ սկսվեց։

*
**

«N. W. Tageblatt» լրագիրը գրում է. «Լուռ կերպով յայտնվեց նախկին աւստրիական երցհերցոգ Եօհան Օրտի մահուան լուրը։ Օրտի «Մարգարիտա» կոչմանված չոգենաւի ապահովագրական գումարը, համաձայն երցհերցոգի կտակին, բաժանվեց մի քանի անձանց մէջ։ Նրա կնոջ—դերասանուհու, ազգականներն առատ վարձատրված են։ Երցհերցոգի կնոջ եղբայրը, որը Նիւեօրկի դերասան է, ստացաւ 50,000 գուլդէն։

*
**

Պարիզում նորերս հրատարակվեց հանգուցեալ Վիկտոր Հիւգոի պօէման «Dieu» վերնագրով։ Այդ պօէման գրված է 1853 թուից մինչև 1858 թուը։

*
**

Լօնդօնում վերջին շաբաթը 303 մահուան դէպքեր են եղել ինֆլուէնցայից։—Բերլինում նոյնպէս վտանգաւոր բնաւորութիւն է ստանում ինֆլուէնցան։

*
**

Պարիզեան իւմօր։ Մարսէլցու ներկայութեամբ—հարաւային ֆրանսիացիների պարծենկոտութիւնը յաճախ ծաղրի է ենթարկվում—պատմում էին մի մարդու մասին, որը գիտէր նմանեցնել իր ձայնը կենդանիների ձայնին։ «Մեծ բան է, ասեց մարսէլցին, ես ճանաչում էի մի մարդ, որը այնպէս էր նմանեցնում իր ձայնը աքաղաղի ձայնին, որ երբ նա կանչում էր աքաղաղի նման, արեգակը դուրս էր գալիս»։—Մուրայկանը ցանկանում է տեսնել բարձր Բօռչիլդին։ «Պարոն Բօռչիլդը չէ ընդունում», յայտնում է ծառան։ «Այդ ինձ համար մի և նոյն է, միայն թէ նա տար»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունիսի։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ սահմանագլխներում ծառայող շատ պաշտօնեաների ռոճիկը աւելացված է, բայց ճանապարհածախսը, օրածախսը և փողը շատ դէպքերում պակասեցրած է։—Նոյն լրագիրը հաղորդում է, որ զեմստվոյի գլխաւորների նշանակելու հետ միասին վճռված է պահպանել կազանում դատաստանական-հաշտարար հաստատութիւններ։—«Гражданинъ» լրագիրը լուր է հաղորդում, որ Կոշլով-Վօրոնէժ-Բոստովեան երկաթուղու վարչութեան վրա քննութիւն է նշանակված՝ առանձին յանձնաժողովի ձեռքով, որի նախագահն է իշխան Օբոլէնսկի։

ԲԵՐԼԻՆ, 8 յունիսի։ Հացահատիկների մաքսի դէմ բողոքող միտինգների թիւը օրից օր շատանում է. Նիւրէնբերգ, Միւնխէն, Շտուտգարտ և Կէնիգսբէրգ քաղաքներից խնդրագրեր են ուղարկված այդ մաքսահարկերի դէմ։

ՊԱՐԻԶ, 8 յունիսի։ Պատգամաւորների ժողովը վճռեց, որ հացահատիկների մաքսը քչացրած չափով կը վերցվի յուլիսի 10-ից սկսած։

ԲԵՐԼԻՆ, 8 յունիսի։ Կայսրը այսօր այցելեց գիւղատնտեսական ցուցահանդիսի ռուսաց բաժինը։

ԼՕՆԴՕՆ, 8 յունիսի։ Համայնքների ժողովը ընդունեց Բուկսդօնի յաւելուածը գործարանական օրէնսդրութեան վերաբերմամբ. այն է, որ 1893 թուի յունվարից սկսած երեխաներին կը թոյլատրվի բանել գործարաններում միայն 11 տարեկան հասակից։ Կառավարութիւնը դէմ է այդ առաջարկին։

ԼՕՆԴՕՆ, 9 յունիսի։ «Times» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, որ Իզմէնից ստացված է լուր՝ թիւրք զօրքի և ապստամբած ժողովրդի մէջ տեղի ունեցած նոր ընդհարման մասին. թուրքերը ջարդված են և անագին վնասներ են կրել։ Երկիւղ են կրում, որ շարժումը կը տարածվի և. Խէջասում, ուր այժմ շատ ուխտաւորներ կան։

ԲԵՐԼԻՆ, 9 յունիսի։ Այսօր պրուսական սէյմը փակվեց գահական ճառով, որի մէջ կայսրը իր գոհունակութիւնը յայտնեց այն մի քանի կարևոր օրինագծերի հաստատութեան առիթով, ինչպէս, օրինակ, հարկերի օրինագիծը, կաթոլիկ հոգևորականութեան գումարներից կազմած դրամագլխի օրինագիծը և համայնական օրինագիծը. «Կրօնական խաղաղութիւնը, որ շատ հարկաւոր է պետութեան,—ասված է ճառում,—աւելի ևս հաստատ է դառնում, երբ տարածվում է այն համոզմունքը, թէ եկեղեցու դիտումները պէտք է սահմանափակվեն այնքան, որքան նրանք համապատասխան կը լինեն այն դիրքին, որը բռնել է պետութիւնը»։ Վերջում կայսրը յայտնեց, թէ հաւատացած է, որ սէյմի նստաշրջանի հետևանքները արդիւնաւէտ կը լինեն խաղաղութեան ժամանակ, որը վրդովվելու երկիւղի ոչինչ առիթ չը կայ, և որի պահպանութեան համար կայսրը միշտ հոգատար կը լինի։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 7-ին

Լոնդոնի վրա	10 ֆունտ արժէ	85 ր.	10 կ.
Բերլինի վրա	100 մարկ —	41 »	67½ »
Փարիզի վրա	100 ֆրանկ —	33 »	70 »
Ոսկի	— — արժէ	6 »	90 »
Մաքսային կուպոններ	—	137 »	50 »
Արծաթ	— — —	1 »	05 »
Բորսային դիսկոնտներ	—	3¾ և	5% »
Պետ. բանկի 5% տոմս	—	102 »	75 »
— — — — 2-րդ	—	102 »	75 »
— — — — 3-րդ	—	100 »	— »
— — — — 4-րդ	—	100 »	— »
— — — — 5-րդ	—	100 »	— »
— — — — 6-րդ	—	101 »	50 »
6% ոսկեայ ընտա		145 »	50 »
4% ոսկեայ փոխառութիւն		— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին չրջ.		100 »	— »
— — — — 2-րդ	—	101 »	87 »
— — — — 3-րդ	—	102 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.		244 »	— »
— — երկրորդ	—	224 »	— »
Պետական. երկաթուղային ընտա		104 »	25 »
5½% ընտա		— »	— »
4% ներքին փոխառութիւն		97 »	25 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		101 »	50 »
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի.		102 »	87 »
4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մնաց.		138 »	25 »
— — — թղթադ.		102 »	12 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.		101 »	75 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		101 »	75 »
Օդէսայի — —		102 »	— »
Թիֆլիսի — —		— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.		— »	— »
— — Քութայիսի — —		— »	— »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի հայոց գրքերի հրատարակութեան ընկերութեան ընդհանուր ժողովի նախագահը յայտնում է, որ հինգշաբթի, յունիսի 13-ին, երեկոյեան ժամի 7½-ին, Դումայի դահլիճում կը կայանայ ապրիլի 13-ի և մայիսի 4-ի ընդհանուր ժողովի շարունակութիւնը։ Նիստի պարապմունքները լինելու են.

1) Անցեալ ժողովի արձանագրութեան ընթերցումը.
2) Թիֆլիսի պ. նահանգապետի առաջարկութեան ընթերցումը.
3) 1890 թւի հաշւի ընթերցումը և վաւերացումը.
4) 1891 թւի նախահաշւի ընթերցումը և վաւերացումը.
5) Լրացուցիչ ընտրութիւններ։

1—2

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՌՔ“
կոչված պատկերները ծախվում են
100 օրինակի գինն է . . . . . 70 բուբլի։
25 օրինակի գինն է. . . . . 20 բուբլի։
Մի օրինակի գինն է. . . . . 1 բուբլի։
ՀԱՍՑԷՆ Է՝ МОСКВА, АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ, ИВАНУ ПАНОСОВУ.
4—6

Լոյս տեսաւ
ՖԵՐԴ. ՇՄԻԴԹ
ՌԷՅՆԵԿԷ ԱՂՈՒԷՍԸ
Գերմ. թարգմանեց
ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
Գինն է 60 կ. ճանապարհի ծախսով։
1—3

ԱԿԿԷՐՄԱՆԻ հայոց եկեղեցու համար հարկաւոր է մի հմուտ ՏԻՐԱՑՈՒ, որը պէտք է լաւ գիտենայ ձայնագրութիւն և ունենայ աջող ձայն։ Նա զբաղուում ունենալու է շաբաթական 4—6 դաս երգեցողութիւնից։ Ցանկացողները թող շուտով ուղարկեն իրանց պայմաններն այս հասցէով. АККЕРМАНЪ (Бесс. губ.) священнику Аврааму Марутянцу.
3—3

НАЙДЕНЫ около Вокзала 2-го іюня Анастасіей Ивановной Осиповой 2 паспорта и 8 векселей персидско-подданныхъ армянъ. Помянутая Осипова проживаетъ въ Тифлисѣ, въ 10-мъ участкѣ, на 1-ой Малаканской улицѣ, въ домѣ Бабаева, № 1.

Անաստասիա Օսիպովա ազգանունով կինը, որը կենում է Թիֆլիսի 10-րդ քաղաքամասում, առաջին Մալականսկայա փողոցում, Բաբաեվի տանը, № 1, յունիսի 2-ին գտել է երկաթուղու կայարանի մօտ 2 անցագրեր և 8 հատ փոխանակագրեր, որոնք պատկանում են պարսկահպատակ հայերին։
3—3

Լոյս են տեսել
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Հետևեալ գրքերը.

ԼԱԼՕ, Թիւրքահայերի կեանքից (սպառված)	5 կ.
ԽՕԼԵՐԱ և նրա առաջն առնելու միջոցներ	5 »
ԱՑՆՏԵՂ, ԵՒ ԱՑՍՏԵՂ, Դրիգոր Արծրունու	10 »
ԱՐՆԱԳԻՆ, Լէօի, (սպառված)	7 »
ՊՍՏԻԿ Է ԲԱՑՑ ՉՍՏԻԿ Է, Լունկեվիչի (սպառված)	5 »
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ	5 »
ՄՏՔԻ ՄՇԱԿը, Խ. Մալումեանի	50 »
ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ (ըստ Շէկսպիրի)	5 »
ԻՆՉ Է ԿԱՑԾԱԿը	5 »
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, Շէդրինի. Թարգ. Խ. Մ.	5 »
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏ / ԳԻՒՂԱԿԱՆ ՋՈՒԹԱԿԱՀԱՐ	5 »
ԵՂԲԱՑՐ ԵՂԲՕՐ ԴԷՄ	7 »

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնեն „Երկրաշարժ և Հրաբուղխ“, կենդանական աշխարհից „Կապիկների կեանքը“, Գարշինի „Արջերը“ և ժողովրդական ընթերցանութեան ուրիշ գրքեր։

Դիմել Թիֆլիս. Խ. Մալումեան

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի։
ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա);
ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ ՍԿՍԵԼ Է ԻՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՅՈՒՆԻՍԻ 2-ին, 1889 թւին։

Ընկերութեան գործունէութեան վրա կարգված է մշտական, իրական, կառավարչական վերահսկողութիւն։

«ՈՒՐԲԷՆ» ընկերութիւնը կատարել է 1890 թւին թէ Ֆրանսիայում և թէ Եւրոպայի ուրիշ պետութիւնների մէջ ապահովագրութիւններ

50,000,000 ֆրանկ գումարի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
Նեվսկիյ պրոսպեկտ
№ 13

(URBAIN)
ՈՒՐԲԷՆ

ՈՒՐԲԷՆ ընկերութիւնը չէ վերցնում ապահովագրված-ներից ընթացիկ ՊՐԷՄԻԱՆԵՐ՝ ապահովագրվածի ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԴԷՊՔՈՒՄ, և այնու ամենայնիւ ՊՕԼԻՍԸ շարունակում է պահպանել իր կատարեալ ոյժն ու իրաւունքը։

Բաժանմունքներ պետութեան գլխաւոր քաղաքներում։

Գլխաւոր գրասենեակը Անդրկովկասի համար ԹԻՖԼԻՍՈՒՄՆ է. Պօլակ և ընկ. Գրաֆսկայա փողոց, տուն իշխ. Զավչավաձէի (նախկին Շաբուրովի) „Սէվերնիէ Նօմէրա“ հիւրանոցի կողքին։

Նոյն տեղ տրվում են և ձրիապէս ուղարկվում են ընկերութեան կանոններ և բրոշիւրներ։

16—20 (շ.)

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ
ТОВАРИЩЕСТВО
МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА
БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ
ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовокъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабель «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелѣзныхъ дорогъ.

Складъ локомобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клайетонъ и Шутлівортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ
Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго училища кв. № 8.

64—100 (ե. շ.)

„ՄՇԱԿԻ“ խմբագրատանը ծախվում է. „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ“ ЛЕКЦІЯ ЧИТАННАЯ НА АРМЯНСКОМЪ ЯЗЫКѢ, **ГРИГОРІЕМЪ АРЦРУНИ.** Переводъ А. Аракелянца, (Москва, 1880). —Цѣна 25 коп., съ пересылкою 30 к. (Почтовыми марками). 12—20

UNE FRANÇAISE DÉSIRE AVOIR UNE DEMI—PLACE OU DES LEÇONS. S'informer âu bureau de la rédaction du journal le „MSCHAK“

Французженка желаетъ имѣть уроки, или мѣсто гувернантки въ семействѣ, съ тѣмъ, чтобы часть дня имѣть свободнымъ. Объ адресѣ спросить въ редакціи газ. „МШАКЪ“.

Մի ֆրանսուհի օրիորդ ցանկանում է դասեր տալ, կամ ընտանիքում վարժուհի պաշտօն ստանալ, այն պայմանով, որ օրվայ մի մասը ազատ ունենայ։ Հասցէի մասին հարցնել „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը։
4—6

Զ. Բալուղեանի
„ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ“
Ծախվում են Թիֆլիսի կենտրոնական դրավաճառանոցում։
Գինն է 50 կ։
3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Іюня 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.